Նախագահ
Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության
Երկրորդ Խորհրդական



Տաճարային օրհնություններ

Ես դեռ հիշում եմ, երբ ծնողներս մեր ընտանիքը տարան Եվրոպայում կառուցված առաջին Շվեյցարիայի նորակառույց Տաճարը, դառնալու հավերժական ընտանիք: Այն ժամանակ ես 16 տարեկան էի և չորս երեխաներից ամենափոքրն էի: Մենք միասին ծնկի իջանք զոհասեղանի մոտ՝ երկրի վրա կնքվելու քահանայության զորությամբ, հրաշալի խոստումով, որ կարող ենք կնքվել հավերժության համար: Ես երբեք չեմ մոռանա այդ հրաշալի պահը:

Լինելով պատանի, ես մեծապես տպավորվել էի, որ մենք կտրեցինք անցանք երկրի սահմանները, որպեսզի կնքվեինք ընտանիքով: Ինձ համար խորհրդանշական է այն, որ տաճարային աշխատանքը հատում է աշխարհիկ սահմանները՝ հավերժական օրհնություններ բերելով երկրի բոլոր բնակիչներին: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու տաճարները իսկապես կառուցվում են հօգուտ ողջ աշխարհի՝ անկախ ազգային կամ մշակութային պատկանելությունից կամ քաղաքական հայացքներից:

Տաճարներն անառարկելի վկայություն են, որ բարությունը կհաղթի: Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական՝ Նախագահ Ջորջ Ք. Քենոնը (1827-1901), մի անգամ ասել է. «Տաճարի համար դրված յուրաքանչյուր հիմնաքար, և յուրաքանչյուր ավարտված Տաճար . . . նվազեցնում է սատանայի զորությունը երկրի վրա և ավելացնում է Աստծո և Աստվածության զորությունը»:[1]

Մինչ յուրաքանչյուր տաճար ավելացնում է արդարակեցության ազդեցությունը երկրի վրա, անշուշտ մեծ օրհնություններ են գալիս նրանց, ովքեր իրականում տաճար են հաճախում: Այնտեղ մենք ստանում ենք ավելի շատ լույս և գիտելիք, և հանդիսավոր ուխտեր ենք կապում, որոնք պահելու դեպքում կարողանում ենք քայլել աշակերտի ճանապարհով: Եթե հակիրճ ասենք, տաճարը ուսուցանում է մեզ կյանքի սուրբ նպատակի մասին և օգնում է ստանալ ֆիզիկական և հոգևոր ճիշտ ուղղություն:

Ինչևէ, մենք միայն մեզ համար չէ, որ հաճախում ենք տաճար: Ամեն անգամ մտնելով այդ սուրբ շենքերը, մենք դեր ենք խաղում փրկության սուրբ, փրկագնող աշխատանքում, որը մատչելի է դարձել Աստծո բոլոր զավակներին Հոր Միածնի Քավության շնորհիվ: Սա անձնազոհ և սուրբ ծառայություն է, որը թույլ է տալիս մեզ որպես մահկանացուներ մասնակցել Սիոն Սարի վրա փրկիչներ դառնալու փառահեղ աշխատանքին:

Ովքեր ինչ-որ պատճառով այժմ չեն կարող

հաճախել տաճար, ես խրախուսում եմ ձեզ՝ ձեր ուժերի սահմանում արեք ամեն ինչ տաճարի երաշխավորագիր կրելու համար: Տաճարային երախշավորագիրը մեր հավատարմության և Տիրոջը ծառայելու վճռականության խորհրդանիշ է: Դա Տիրոջ հանդեպ մեր սիրո խորհրդանիշն է, քանի որ ինչպես Հիսուսն է ուսուցանել. «Ով որ իմ պատվիրանքներն ունի և նորանց պահում է, նա է ինձ սիրողը. և ինձ սիրողն իմ Հորիցը կսիրվի. և ես կսիրեմ նորան, և ինձ կհայտնեմ նորան» (Հովհաննես ԺԴ. 21):

Մինչ աշխարհը շարունակում է զեղեցկանալ Տիրոջը նվիրագործված այս սուրբ կառույցներով, մեր աղոթքն է, որ մենք անենք մեր մասը երկինքը երկրին ավելի մոտեցնելու համար՝ արժանի լինելով տաճարային երաշխավորագիր կրելուն և օգտագործելուն: Այդպիսով, արդարակեցությունը իրոք կավելանա ոչ միայն մեր կյանքում և տներում, այլև մեր համայնքներում և ողջ աշխարհում:

ՀՂՈՒՄ

1. George Q. Cannon, in “The Logan Temple,” *Millennial Star,* Nov. 12, 1877, 743.

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Շատերն ավելի լավ են սովորում և ավելի երկար հիշում, երբ մտքերն արտահայտում եք ցուցադրական նյութեր օգտագործելով, քան սոսկ խոսելով (տես *Teaching, No Greater Call* [1999], 182): Դասի ընթացքում կարող եք տաճարի նկար ցուցադրել: Հոդվածը կարդալուց հետո քննարկեք, թե ինչու է տաճարը կարևոր Նախագահ Ուխդորֆի համար: Խնդրեք ընտանիքի փոքր երեխաներին տաճարում իրենց ընտանիքի նկարը նկարել:

Teaching, No Greater Call սահմանում է. «Խրախուսեք նրանց, ում ուսուցանում եք մեկ կամ ավելի նպատակներ դնել, որոնք կօգնեն իրենց ապրել ձեր ուսուցանած սկզբունքով» (159): Կարող եք Նախագահ Ուխդորֆի ուղերձը կարդալ ընտանիքի հետ և ընտանիքի անդամներին խնդրել գրել իրենց անձնական նպատակը, որը կօգնի իրենց արժանի լինել տաճարի երաշխավորագիր կրելուն և օգտագործելուն:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Տեսարան բարձր դիրքից

Մայնդի Ռայ Հոլմս

Երիտասարդ տարիքում բազում հնարավորություններ եմ ունեցել մկրտություններ կատարելու մահացածների համար Սան Դիեգո Կալիֆորնիա Տաճարում: Թեպետ ես միշտ լավ փորձառություններ եմ ունեցել, սակայն մի տաճարային այցելություն առանձնանում է իմ մտքում:

Ես 16 տարեկան էի, իսկ փոքր քույրս 12 տարին նոր էր բոլորել, և ես օգնում էի նրան իր առաջին տաճարային այցելության ժամանակ մկրտություններ կատարել մահացածների համար: Քանի որ դա նրա առաջին այցելությունն էր, ավարտելուց հետո մենք որոշեցինք զբոսնել տաճարի բակում:

Տաճարի տարածքը դիտարժան մի քանի կետեր ուներ մի կողմում, և մենք քայլեցինք այնտեղ: Քանի որ Սան Դիեգո Տաճարը գտնվում է երթևեկելի մայրուղու կողքին, այդ բարձր դիտակետում կանգնելով նայում ես ներքև՝ մայրուղուն:

Տաճարի բարձր կետում կանգնելով, այդ օրը կյանքի մի նոր հեռանկար բացվեց իմ առջև: Ես նայում էի ներքև աշխարհին՝ արագընթաց մեքենաներով, մարդաշատ առևտրի կենտրոններով և ճանապարհային նշաններով:

Այդ ժամանակ ես մտածեցի. «Դու չես ուզում դրա մասը լինել, դա չէ կյանքի իմաստը»: Ինձ միշտ ուսուցանել են, որ կյանքի իմաստը մեր Երկնային Հոր մոտ վերադառնալը և Նրա հետ ապրելն ու Նրան նմանվելն է: Ես գիտեի, որ այդ նպատակին հասնելու համար ինձ հարկավոր չէին աշխարհի բաները:

Ես շրջվեցի և նայեցի հիասքանչ տաճարին, և երախտապարտ էի ավետարանի գիտելիքի և այն հեռանկարի համար, որոնք այն պարգևում է: Ես գիտեի, որ խառնաշփոթ և նենգ աշխարհում գտել եմ կանգնելու ավելի բարձր կետ:

Այդ օրը տաճարում ես խոստացա իմ Երկնային Հորը, որ միշտ կկանգնեմ ոչ թե աշխարհի, այլ Նրա կողքին: Կարևոր չէ, թե ինչ է աշխարհը նետում մեզ վրա, մենք կարող ենք հաղթահարել այն, պահելով մեր կապած ուխտերը և կանգնելով սուրբ վայրերում (տես ՎևՈւ 87.8):

Ավելի գեղեցկացնենք աշխարհը

Նախագահ Ուխդորֆն ասել է, որ երբ տաճար է կառուցվում, այն ավելացնում է Աստծո զորությունը երկրի վրա և աշխարհին ավելի գեղեցիկ վայր է դարձնում: Գունավորեք այս նկարը: Ստորև տրված են մի քանի հրաշալի օրհնություններ, որ տաճարը պարգևում է մարդկանց: Եթե արժանի ապրեք մի օր տաճար գնալու համար, ապա հետևյալ օրհնություններից յուրաքանչյուրը կլինի ձերը:

Սիրո և գեղեցկության վայր

Մկրտություն այն մարդկանց համար, ովքեր իրենց կյանքի ընթացքում չեն մկրտվել

Ամուսնություն, որ կարող է հարատև լինել

Երեխաներ, որ հավերժ կնքվում են ծնողներին

Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին սովորելու վայր

Արժանի, հնազանդ կյանք

© 2010 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/09: Թարգմանության հաստատումը. 6/09: *First Presidency Message, August 2010* -ի թարգմանությունը: Armenian. 09368 201

Ավելացնենք հավատքը և անձնական արդարակեցությունը

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և դարձնել Սփոփող Միությունը ձեր իսկ կյանքի ակտիվ մասը:

Հավատք • Ընտանիք • Ծառայություն

Սուրբ գրություններից.
Եսայիա Բ.2–3; ՎևՈ 109.22–23; 110.8–10

Տաճարային երկրպագությանը արժանի լինելու մեր պատասխանատվությունը

«Տաճարում մեր ստացած համապատասխան արարողության հետ կապված ուխտերը դառնում են մեր միավորները Աստծո ներկայություն մտնելու համար: Այդ ուխտերը բարձրացնում են մեզ մեր սեփական զորության և աշխարհայացքի սահմաններից վեր: Մենք ուխտեր ենք կապում, որպեսզի ցույց տանք արքայությունը կառուցելու գործին մեր նվիրվածությունը: Մենք դառնում ենք ուխտի ժողովուրդ, երբ ուխտի մեջ ենք մտնում Աստծո հետ: Բոլոր խոստացված օրհնությունները մերն են, եթե հավատարիմ լինենք այդ ուխտերին: . . .

Ի՞նչ կարող են անել Եկեղեցու կանայք տաճարի օրհնություններին արժանի լինելու համար:

Իր մարգարեների միջոցով Տերը հրավիրում է նրանց, ովքեր դեռ չեն ստացել տաճարի օրհնությունները, անել անհրաժեշտ ամեն բան, որպեսզի արժանի լինեն ստանալու դրանք: Նրանց, ովքեր արդեն ստացել են այդ օրհնությունները, Նա հրավիրում է վերադառնալ որքան հնարավոր է հաճախ՝ կրկին վայելելու այդ փորձառությունը և խորացնելու Նրա հավերժական ծրագրի իրենց պատկերացումը և ըմբռնումը:

Եկեք արժանի լինենք տաճարի գործող երաշխավորագրին: Եկեք գնանք տաճար մեր ընտանիքների հետ հավերժորեն կնքվելու համար: Եկեք վերադառնանք տաճար այնքան հաճախ, որքան մեր պայմանները թույլ են տալիս: Եկեք մեր մահացած նախնիներին հնարավորություն տանք ստանալու վեհացման արարողությունները: Եկեք վայելենք հոգևոր ուժը և հայտնությունը, որոնք մենք ստանում ենք կանոնավոր տաճար հաճախելով: Եկեք լինենք հավատարիմ և կապենք ու պահենք տաճարային ուխտերը, որ ստանանք Քավության բոլոր օրհնությունները»:[1]

Սիլվիա Հ. Օլրեդ, Սփոփող Միության գերագույն նախագահության առաջին խորհրդական:

Մեր պատմությունից

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին (1910–2008) ուսուցանել է, որ Սփոփող Միությունը ստեղծվել է տաճարում երկրպագելու քույրերի ցանկությունից.

«Կիրթլենդի Տաճարի կառուցման ընթացքում կանանց կոչ արվեց իրենց չինական սպասքը փշրել մանր կտորների, որպեսզի այն խառնվեր տաճարի պատերի սվաղին, որսալով արևի և լուսնի լույսը, որն ընկնելով տաճարի վրա, կշողարձակեր՝ շքեղ տեսք հաղորդելով կառույցին:

Այդ տարիներին, երբ շատ քիչ գումար կար, սակայն մեծ հավատք, բանվորները իրենց ուժն ու միջոցներն էին նվիրաբերում Տիրոջ տան կառուցմանը: Կանայք նրանց ուտելիք էին մատակարարում՝ լավագույնը, որ կարող էին պատրաստել: Էդվարդ Վ. Թաիջը գրել է, որ տեսնելով տաճարի վարագույրները կարող կանանց, Ջոզեֆ Սմիթն ասաց. «Դե, քույրեր, դուք միշտ պատրաստ եք օգնելու: Քույրերը միշտ առաջինն են և բոլորից առաջ են բոլոր բարի գործերում: Մարիամն առաջինը գերեզմանի մոտ տեսավ

հարություն առաջ Տիրոջը, և քույրերն այժմ առաջինն են, որ աշխատում են տաճարի ներքին հարդարման վրա»: . . .

«Կրկին Նավույում, տաճար կառուցելիս մի քանի կանայք միացան, որպեսզի վերնաշապիկներ կարեին շինարարների համար: Այդ պայմանների համար աննախադեպ էր, որ 1842թ. մարտի 17-ին, հինգշաբթի օրը, քսան կանայք հավաքվեցին Մարգարեի խանութի վերնահարկում»:[2] Այդպես Սփոփող Միության սկիզբը դրվեց:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Սիլվիա Հ. Օլրեդ, «Սուրբ տաճարներ, սրբազան ուխտեր», *Լիահոնա,* նոյ. 2008, 113, 114:
2. Gordon B. Hinckley, “Ambitious to Do Good,” *Ensign,* Mar. 1992, 2.

Ի՞նչ կարող եմ ես անել

1. Ինչպե՞ս կարող եմ աջակցել իմ քույրերին պատրաստվել և հաճախել տաճար:

2. Ինչպե՞ս կարող եմ վաղ օրերի քույրերի թողած ժառանգության օրինակը հանդիսանալ, ովքեր զոհաբերություններ էին կատարում տաճարային օրհնություններ ստանալու համար:

3. Ինչպե՞ս կարող եմ արժանի լինել տաճարային օրհնություններին:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2010 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/09: Թարգմանության հաստատումը. 6/09: *Visiting Teaching Message, August 2010* -ի թարգմանությունը: Armenian. 09368 2010